ՊԱՇՏՕՆԱԿԱՆ Ք

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ·

Յունուար 8· Սինոդը հրամայեց ուղարկել Ս· Էջմիածնի վանական կառավարութեան եօթն ժապաւինած տոմարներ, որոնցից առաջինում պիտի գրել Մայր Աթոռի ամենաասեսակ ծախսերը· երկրորդում ՀԵմարանի, երրորդում Մառանի պաշարեղէնաց, Չորրորդում Տպարանի, Հինգերորդում միաբանից, Վէցերորդում Ագարակի, և Եօթներորդում զանազան նորոգութեանց վարպետների և մշակների ծախուց յօդուածները պատշաճաւոր ստորագրութեամբ վաւերացնելով և տարուայ վերջը ապացուցական թղթերի և համառօտ ցուցակի հետ ներկայացնելու Սինոդին ի վերաքննութիւն:

—

Յուն· 8· Սինոդը հրամայեց ուղարկել Մայր Աթոռի գանձապահին երկու ժապաւինած տոմար երկու անդամների և պ· Պրոկուրորի ստորագրութեամբ վաւերացրած· պատուիրելով մինում գրել բոլոր դրամական մուտքն ու ծախսը, 1893 թուի ընթացքում և միւսում աւանդապահութեան, որոնք իւրաքանչիւր ամսուայ սկզբում մատուցանելու է Սինոդին ի ստուգութիւն, իսկ տարուայ վերջը վկայագրերով հանդերձ ի վերաքննութիւն:

—

Յուն· 8· Սինոդը հրամայեց ուղարկել Ս· Էջմիածնի Տպարանական ժողովին երեք ժապաւինած տոմար, որոնցից առաջինում գրել տպարանական մուտքն ու ծախսը, երկրորդում գրքերը, եր-

բորդում թղթերը և բոլոր տեսակ նիւթերը 1893 թուի ընթացքում, իսկ տարուայ վերջը համառօտ ցուցակի և ապացուցական թղթերի հետ մատուցանել Սինոդին ի վերաղննութիւն։

—

Յուն. 11. Սինոդը հրամայեց Աղէքսանդրապոլի հոգևոր կառավարութեան, տալ Մակար ծ. վարդապետին ճանապարհածախս Աղէքսանդրապոլից Շուշի ըստ չափու վերստից, հաշուելով և այն 54 բուբլին, որ արդէն տուացել է կառավարութիւնից։

—

Յուն. 11. Մայր Աթոռի գանձապահ բարձրապատիւ Վահան վարդապետը յայտարարութեամբ ներկայացնում է Սինոդին 1892 թուի Աթոռի դրամական մտից և ծախուց և աւանդապահութեան տումարները ապացուցագրերով հանդերձ։ Դրամական տումարի մէջ գրուած է մուտք 165869 ր. 98 կ. իսկ ծախք 145743 ր. 32 կ. որը բառնալով մտից գումարից առ մէկ Յունուարի 1893 ամի մնայ 20126 ր. 66 կ. որի մէջ մտնում են այլևայլ անձանց ձեռագրով պարտքեր 4381 ր. 78. նոյնպէս և Գեր. Ներսէս եպիսկոպոսից պահանջելի 2438 ր. 85 կ։ Իսկ աւանդապահութեան տումարում գրուած է մուտք 49678 ր. 98 կ. և ծախք 2592 ր. 88 կ. որը հանելով մտից գումարից առ 1-ն Յունուարի մնայ 47086 ր, 10 կ. որոնք են գրաւականներ, աւանդագրամներ աշակերտաց և բանկային տոմս Արդութեան օրիորդական դպրոցի և յանուն եօթն վիրաց ս. Աստուածածնի ժողոված գրամներ։ Հրամայեց Սինոդը Մայր Աթոռի գանձապահին անցեալ տարուանից մնացած 20126 ր. 66 կ. փոխանցել Մայր Աթոռի դրամոց տումարի մէջ, նոյնպէս 47086 ր. 10 կ. աւանդապահութեան տումարի մէջ, առանձին առանձին յօդուածներով։

—

Յուն. 11. Սինոդը հրամայեց Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ թեմի կառավարիչ Գեր. Գրիգոր եպս. Աղափիրեանցին Նոր-Նախիջևանի Զալթը գիւղա.ի դպիր Դաւիթ տէր Մելքոնեան Բաղդասարեանցին ձեռնադրել քահանայ տեղւոյն ժողովրդի վերայ և ձեռնադրութեան վկայականը մատուցանել Սինոդին ի հաստատութիւն։

Յուն. 15. Սինոդը վերադարձնելով Երևանի Հայոց կոնսիստորիային կոստանդին տէր Աւետիսեանի վկայականները, նորա քահանայութեան մասին արած միջնորդութիւնը մերժեց, յիշեալ կոստանդին տէր Աւետիսեանը Սինոդի 1892 թուի Յունիսի 23-ի շրջաբերականի համեմատ ուսումն չունենալու պատճառաւ։

—

Յուն. 15. Սինոդը Հրէուհի Սոփիայ Միքայեան Կուզեացինի վկայականը ուղարկելով Կովկասի քաղաքական մասի Տէր Կառավարչապետին, խնդրում է թոյլ տալ նորան ընդունել Հայոց դաւանութիւն իւր ցանկութեան համեմատ։

—

Յուն. 15. Սինոդը հրամայեց Տփխիսի կոնսիստորիային կարգել անդամ Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանցին և Գաբրիէլ քահանայ տէր Գաբրիէլեանցին անդամութիւնից արձակուած Ղևոնդ քահանայ Խարազեանցի և Գէորգ քահանայ Գալստեանցի տեղ։

—

Յուն. 15. Սինոդը Տփխիսի կոնսիստորիայի 1892 թուի Դեկ. 19-ի թ. 4213 յայտարարութեան համաձայն հրամայեց յանձնել Սինոդի անդամ Դեր. Սարգիս եպիսկոպոսին ձեռնադրել քահանայ սարկաւագ Յովհաննէս Նազարեանցին և ձեռնադրութեան վկայականը մատուցանել ի հաստատութիւն։

—

Յուն. 15. Սինոդը հրամայեց Աղէքսանդրապոլի Հոգևոր կառավարութեան տալ Մայր Աթոռի միաբանների սենեակների շինութեան վարպետ Տիգրան Մազմանեանցին 600 ռուբլի, ծախուց յօդուածը նորա ստորագրութեամբ վաւերացնել տալով։

—

Յուն. 15. Սինոդը հրամայեց Երևանի Հայոց կոնսիստորիային Վահան քահանայ Ենգիբարեանցից ստանալ 30 ռուբլի տուգանք 7 ռուբլի գաղելու համար և ուղարկել Սինոդին, և մանրամասնաբար քննել նորա հինգ ամեայ (1885 89) ընթացքում գործակալութեան բոլոր դրամական հաշիւները, և արդիւնքի մասին դատողութեամբ հանդերձ ներկայացնել Սինոդին։

Յուն. 21. 22 Տփխիսի վիճակային Հայոց կոնսիստորիայի թ. 4301, 4299 և 94 յայտարարութեանց համեմատ Սինոդը հրամայեց թոյլ տալ մոնել ամուսնութեան խնամէական հինգերորդ աստիճանում փոքր Գէօնդուրցի Արտեմ Յարութիւնեանին թերիզայ Շահանեանի հետ. Արճէշցի Ալահվերդի Մուսայէլեանցին Ոսկի Առաքելեանցի հետ. Սղնախցի Վարդոյ Գալոյեանին և Աւագեանցի հետ։ Աստրախանի կոնսիստորիայի թ. 2198 յայտարարութեան համեմատ՝ Մոզդոկցի Յարութիւն Սագինեանցին Թագուհի Աւետիքեանի հետ։ Ղարաբաղի կոնսիստորիայի թիւ 1817, 1751 յայտարարութեանց համեմատ՝ Ղարաչինար գիւղացի Բաղիշ Սարգսեանին Գիւլի Սիմէոնեանի հետ. Դաշբուլաղցի Աւետիք Շաբանեանցին Թազագիւլ Յարութիւնեանցի հետ։ Եւ Երևանի կոնսիստորիայի թիւ 3648, 49, 22, 50. Բիւրականցի Սարգսին Սալբի Յակոբեանի հետ. Անգեղակոթցի Նիկալայ Մարկոսեանին Բանի Միրզոյեանի հետ, Աղաւնաձորի Գրիգոր Հայրապետեանին Զենովայ Համբարձումեանի հետ, Բայազեդցի Գեղամ Խրղութեանին Սոփիայ Համբոյեանի հետ։